



# ԱՇՀԱՀ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2024-2025 ՈՒՍՏԱՐԿԱ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏ

# Արևի թեստ



ԵՐԵՎԱՆ 2023

# ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## «ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

Մասնագիտության 2024-2025 ուստարվա ընդունելության թեստ

### ԲԱԺԻՆՆԵՐ

<b>1. Մաթեմատիկա</b>		<b>8 հարց</b>
• Թվաբանություն	2 հարց	
• Հանրահաշիվ	2 հարց	
• Երկրաչափություն	4 հարց	
<b>2. Ֆիզիկա</b>		<b>3 հարց</b>
<b>3. Տրամաբանություն</b>		<b>3 հարց</b>
<b>4. Արվեստ և ճարտարապետություն</b>		<b>9 հարց</b>
• Հայկական օրինակներ	3 հարց	
• Համաշխարհային օրինակներ	3 հարց	
• Ճարտարապետական խնդիրներ	3 հարց	
<b>5. Տեքստային ընկալում</b>		<b>2 հարց</b>
		/25 հարց/

Առաջին մասի տևողությունը 150 րոպե (2.5 ժամ)

ԸՆԴՄԻՋՈՒՄ 10 րոպե

---

<b>6. Գծագրություն</b>		<b>2 հարց</b>
• Լծորդում	1 հարց	
• Աքսոնոմետրիա, հատույթ, պրոյեկցիա	1 հարց	

/Ընդհանուր 27 հարց/

Երկրորդ մասի տևողությունը 150 րոպե (2.5 ժամ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ 270 րոպե (5 ժամ)

Դիմորդի

անուն ազգանուն հայրանուն \_\_\_\_\_

ՔՆՆԱՏՈՄՍ N 01

I. ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

8 հարց

ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հողակտորի հատակագծի մասշտաբը 1:5000 է: Ինչքա՞ն կլինի հողակտորում երկու կետերի հեռավորությունը, եթե համապատասխան կետերի հեռավորությունը հատակագծում հավասար է 0,5սմ:

ա) 1 կմ

բ) 2,5 մ

գ) 25000 սմ

դ) 10000 սմ

նշումների համար

2. Երկու թվերի գումարը 80 է: Գտնել այդ թվերից փոքրը, եթե դրանցից մեկի 40%-ը մյուսի  $\frac{2}{3}$  մասն է:

ա) 36

բ) 50

գ) 44

դ) 30

նշումների համար

3. Կլոր սեղանի շուրջը դրված է 6 արժու: Քանի՞ եղանակով կարելի է մարդ նստեցնել այդ սեղանի շուրջ:

ա) 6

բ) 36

գ) 120

դ) 720

նշումների համար

---

4. Քանի՞ հաստման կետ ունեն  $f(x) = x^2 - x + 5$  և  $g(x) = 2x^2 + 3x - 1$  ֆունկցիաների գրաֆիկները:

ա) 0

բ) 1

գ) 2

դ) 3

նշումների համար

5.  $AB$  և  $CD$  հատվող լարերից առաջինի երկարությունը 32 է, իսկ երկրորդ լարի հատվածներն են 12 և 16:

5.1 Հաշվել  $CD$  լարի երկարությունը:

ա) 192

բ) 28

գ) 4

դ) 32

5.2 Գտնել  $ABCD$  քառանկյան անկյունների գումարը:

ա)  $180^\circ$

բ)  $360^\circ$

գ)  $540^\circ$

դ)  $720^\circ$

5.3 Գտնել  $\angle ADC$ -ն, եթե  $\angle ABC = 32^\circ$ :

ա)  $32^\circ$

բ)  $16^\circ$

գ)  $64^\circ$

դ)  $96^\circ$

5.4 Որոշել  $AB$  լարի հատվածները:

ա) 28 և 4

բ) 14 և 18





գ) 12 և 20

դ) 24 և 8

նշումների համար

6. Ուղղանկյունանիստի հիմքի կողմերն են 12 սմ և 5 սմ, իսկ կողմնային կողը 13 սմ է:

6.1 Հետևյալ պատկերներից ո՞րն է համապատասխանում վերևում տրված պայմաններին:



նշումների համար

6.2 Գտնել ուղղանկյունանիստի ծավալը:

ա)  $30 \text{ սմ}^3$

բ)  $780 \text{ սմ}^2$

գ)  $338 \text{ սմ}^3$

դ)  $780 \text{ սմ}^3$

նշումների համար

6.3 Գտնել ուղղանկյունանիստի հիմքի անկյունագիծը:

ա) 13 սմ

բ) 17

գ)  $13\sqrt{2}$  սմ

դ) 169 սմ

նշումների համար

6.4 Ի՞նչ անկյուն են կազմում ուղղանկյունանիստի անկյունագիծը և հիմքի հարթությունը:

ա)  $90^\circ$

բ)  $45^\circ$

գ)  $30^\circ$

դ)  $60^\circ$

նշումների համար

7.  $ABCD$  սեղանի  $AD$  և  $BC$  հիմքերի երկարությունները համապատասխանաբար 14 և 2 են, իսկ սրունքները՝ 10:

7.1 Գտնել սեղանի բարձրությունը:

Պատասխան՝

7.2 Գտնել  $\angle ADB$  -ի աստիճանային չափը:

Պատասխան՝

նշումների համար
-----------------

8. Կանոնավոր եռանկյուն բուրգի հիմքի կողմը  $6\sqrt{2}$  է, իսկ կողմնային կողերը փոխադրահայաց են:

8.1 Գտնել բուրգի կողմնային կողին առընթեր երկնիստ անկյան աստիճանային չափը:

Պատասխան՝

8.2 Գտնել բուրգի ծավալը:


Պատասխան՝

նշումների համար
-----------------



II. ՖԻԶԻԿԱ  
3 հարց

9. Նկարում պատկերված է հաշվարկման իներցիալ համակարգում ուղղագիծ շարժվող մեքենայի արագության մոդուլի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Մեքենայի վրա ազդող ուժերի համագործ ժամանակի ո՞ր միջակայքում է գրո:



- 1) 0-2 վ
- 2) 2-4 վ
- 3) 4-6 վ
- 4) Ոչ մեկում նշված միջակայքերից:


նշումների համար

10. Ո՞ր ջերմաստիճանում է գոլորշանում ջուրը

- 1) միայն  $100^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում
- 2) միայն  $180^{\circ}\text{C}$ -ից բարձր ջերմաստիճանում
- 3) կամայական ջերմաստիճանում
- 4) միայն  $273^{\circ}\text{C}$ -ից բարձր ջերմաստիճանում:

նշումների համար

11. 10 մ բարձրությամբ սյան գագաթին ամրացված է փողոցային լուսավորության լամպ: Որքան է 4 մ բարձրությամբ շենքի ստվերի երկարությունը, եթե նրա հեռավորությունը սյունից 5 մ է:




նշումների համար

### III. ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

3 հարց


12. Ներբևում տրված պատկերներից (A, B, C, D, E) ո՞ր մեկն է, որ երբ այն տեղադրվի վերին ձախ կողմում գտնվող պատկերի մեջ, ապա կստացվի կատարյալ քառակուսի: Նշել ճիշտ պատասխանը:

A,     B,     C,     D,     E




13. Տրված պատկերներից ո՞րն է ավելորդ: Նշել ճիշտ պատասխանը:

- A,     B,     C,     D,     E



14. Տրված 4 պատկերներից (A, B, C, D) երեքով կարելի է կազմել կատարյալ քառակուսի: Նշել ավելորդ պատկերը:

- A,     B,     C,     D



IV. ԱՐՎԵՍ և ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
9 հարց

15. Հայաստանի որ մասում է գտնվում **Քորայր վանական համալիրը**



ա) Լոռի

բ) Տավուշ

գ) Գեղարքունիք

դ) Արագածոտն

16. Ով է հեղինակը **Նորավանք վանական համալիրի** Սուրբ Աստվածածին եկեղեցու



ա) Կիրակոս

բ) Մոմիկ

գ) Մխիթար

դ) Հակոբ

17. Մողոլական կայսեր Շահ ջահալի կողմից կառուցված **Թաջ Մահալ** դամբարանը ում է նվիրված



ա) իր կնոջը Մումթազ Մահալիին

բ) իր ձիուն

գ) իր հորը սուլթան Զախանգիրին

դ) Հնդկաստանին

18. Զանի տարի տևց 1173 ին սկսված **Պիզայի աշտարակը** կառուցումը



ա) 50 տարի

բ) 120 տարի

գ) 75 տարի

դ) 200 տարի

19. Երբ է հիմնադրվել **Կեչառիսի վանական համալիրը**



ա) 5-7 դար

բ) 11-13 դար

գ) 8-10 դար

դ) 14 դար

20. Ով է **Սագրադա Ֆամիլիա** –ի հեղինակը

ա) Դեվիդ Գրիմ

բ) Ալեքսանդր  
Կրակաու



գ) Անտոնիո Գաուդի

դ) Դանիել Բուռնհամ



21. Ներկայացվում է հրապարակի հատակագիծ և 3 արտոնմետրիկ տեսք, պետք է ճիշտ կռահել պատկանելիությունը:

ա)



բ)





Рис. 19. Римский собор Святого Петра (1547—1564—Микеланджело Буонарроти, с 1607 г. —К. Мадерна, 1656—1667—Л. Бернини)

գ)







22. Ներկայացված եռաչափ պատկերը ունի հորինվածքային գլխավոր առանցք, նշեք ձեր կարծիքով որն է երեք նշված առանցքներից հիմնականը:









23. Ներկայացված Հյուսիսային պողոտաի հատվածին, որ՝ սխեմատիկ տեսքն է համապատասխանում:



24. Ներկայացված բիզնես կենտրոնի շենքի կերպարին, որ՝ երկրաչափական սխեման է համապատասխանում:



1. **Ո՞ր պնդումն է հակասում տեքստի բովանդակությանը.**

**Այրիվանք**

(Ըստ Վարազդատ Հարությունյանի «Հայական ճարտարապետության պատմություն» գրքի)

Այրիվանքը կամ Գեղարդավանքը Հայաստանի զարգացած միջնադարի առավել ինքնատիպ ու նշանավոր վանքային համալիրն է, գեղատեսիլ Գեղարդաձորի անբաժան դարձած զարդը: Իր վիմափոր և վերգետնյա եկեղեցիներով, դամբարանով, մատուռով, հարյուրից ավելի խցերով, տնտեսական բազմաբնույթ սենյակներով (մեծամասամբ տեղավորված պարսպապատերի մեջ), ժայռերին փորագրված ու առանձին կանգնեցված տասնյակ գեղաքանդակ խաչքարերով, վանքը հիրավի հրաշակերտության, ճարտարապետական կառուցվածքների և բնության դաշնության անկրկնելի օրինակ է: Մատենագրական տվյալներով գոյություն է ունեցել դեռևս վաղ միջնադարում և ասպատակվել արաբական տիրապետության ժամանակ: Պարիսպներով շրջափակված հուշարձանները հիմնականում վերաբերում են 13-րդ դարին: Գլխավոր եկեղեցին վերգետնյա է, կառուցված 1219թ. Իվանե Աթաբեկի և Զաքարե Սպասալարի օրոք:

- a. Այրիվանքը կամ Գեղարդավանքը վանքային համալիր է, կազմված եկեղեցիներից, դամբարանից, մատուռից և այլ կառույցներից:
- b. Գեղարդավանքի վանքային համալիրը ասպատակվել է արաբների կողմից:
- c. Գեղարդավանքի գլխավոր եկեղեցին ստորգետնյա այրային կառույց է:
- d. Գեղարդավանքը բնությանը ներդաշնակ ճարտարապետական համալիր է:

2. **Ո՞ր միտքն է համապատասխանում տեքստի բովանդակությանը.**

**Աստվածամոր տաճար**

(Ըստ Վիկտոր Հյուգոյի «Փարիզի Աստվածամոր տաճարը» գրքի)

Փարիզի Աստվածամոր տաճարն այսօր էլ անկասկած հողակապ ու փառահեղ կերտվածք է: Սակայն հնանալով հանդերձ որքան էլ գեղեցիկ մնացած լինի, այնուամենայնիվ, չես կարող չհառաչել և չվրդովվել՝ տեսնելով ան անհամար ավերվածքներն ու վթարումները, որ ժամանակն ու մարդը միաժամանակ հասցրել են պատկառելի հուշարձանին՝ հարգանք չբաժնելով Կառլոս Մեծին, որ դրել է նրա առաջին քարը և Ֆիլիպ Օգոստոսին, որ դրել է վերջինը: ...Անկասկած քիչ են ճարտարապետական այնպիսի գեղեցիկ էջեր, ինչպես այս տաճարի ճակատը, որտեղ մեր աչքի դիմաց, հաջորդաբար և բոլորը միասին երևում են սրածայր կամարով փորված երեք ավագ դռները, դրանց վերևում արքայական քսանութ որմնախորշերի ասեղնագործված և ժանյականման շերտը, ապա՝ կենտրոնական վիթխարի վարդազարդը, երկու կողմից ունենալով մեկական մեծ պատուհան, ասես քահանան սարկավագի և ենթասարկավագի միջև, այնուհետև՝ երեքնուկի ձևով առաստաղված






կամարաշարի բարձր ու նրբակերպ վերնասրահը, որ իր բարակ սյուների վրա պահում է ծանր հարթակը, և վերջապես, երկու սև ու զանգվածային աշտարակներն իրենց թերթաքարե քիվածածկերով, փառահեղ ամբողջության ներդաշնակ մասերը՝ իրար վրա բարձրացած՝ որպես հինգ հսկայական հարկ: ...Մի տեսակ քարեղեն լայնարձակ սիմֆոնիա...


- ✎ Փարիզի Աստվածամոր տաճարին վնասել են Կառլոս Մեծի և Ֆիլիպ Օգոստոսի թշնամիները:
- ✎ Ի սկզբանե տաճարի ճակատին քանդակված են եղել քահանան սարկավազի և ենթասարկավազի միջև:
- ✎ Ժամանակի ընթացքում վերացել է տաճարի քսանութ որմնախորշերի ասեղնագործված և ժանյականման շերտը:
- ✎ Փարիզի Աստվածամոր տաճարի ճակատը հեղինակը շատ գեղեցիկ համարելով, պատկերավոր անվանում է «Մի տեսակ քարեղեն լայնարձակ սիմֆոնիա»:

ԳՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2 հարց

Աքսոնոմետրիկ տեսք





1. Մաթեմատիկա 4-րդ դասարան: Սոկրատ Մկրտրյան, Սուրեն Իսկանդարյան, Արամ Աբրահամյան, Ռուբեն Սարգսյան: 2019թ., մաս 1 և 2:
2. Մաթեմատիկա 5-րդ դասարան: Բորիս Նահապետյան, Աշոտ Աբրահամյան: 2019թ., մաս 1 և 2:
3. Մաթեմատիկա 6-րդ դասարան: Բորիս Նահապետյան, Աշոտ Աբրահամյան: 2016թ.:
4. Հանրահաշիվ 7-րդ դասարան: Մերգեյ Նիկոլսկի, Միխայիլ Պոտապով, Նիկոլայ Ռեշետնիկով, Ալեքսանդր Շեվկին: 2011թ.:
5. Երկրաչափություն 7-րդ դասարան: Լևոն Աթանեսյան, Վալենտին Բուտուզով, Մերգեյ Կադոմցև, Էդուարդ Պոզնյակ, Իրինա Յուդինա: 2016թ.:
6. Հանրահաշիվ 8-րդ դասարան: Մերգեյ Նիկոլսկի, Միխայիլ Պոտապով, Նիկոլայ Ռեշետնիկով, Ալեքսանդր Շեվկին: 2017թ.:
7. Երկրաչափություն 8-րդ դասարան: Լևոն Աթանեսյան, Վալենտին Բուտուզով, Մերգեյ Կադոմցև, Էդուարդ Պոզնյակ, Իրինա Յուդինա: 2017թ.:
8. Հանրահաշիվ 9-րդ դասարան: Մերգեյ Նիկոլսկի, Միխայիլ Պոտապով, Նիկոլայ Ռեշետնիկով, Ալեքսանդր Շեվկին: 2018թ.:
9. Երկրաչափություն 9-րդ դասարան: Լևոն Աթանեսյան, Վալենտին Բուտուզով, Մերգեյ Կադոմցև, Էդուարդ Պոզնյակ, Իրինա Յուդինա: 2018թ.:
10. Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր 10-րդ դասարան: Գեղամ Գևորգյան, Արթուր Սահակյան: 2017թ.:
11. Երկրաչափություն 10-րդ դասարան: Սարիբեկ Հակոբյան: 2017թ.:
12. Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր 11-րդ դասարան: Գեղամ Գևորգյան, Արթուր Սահակյան: 2017թ.:
13. Երկրաչափություն 11-րդ դասարան: Սարիբեկ Հակոբյան: 2017թ.:
14. Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր 12-րդ դասարան: Գեղամ Գևորգյան, Արթուր Սահակյան: 2017թ.:
15. Երկրաչափություն 12-րդ դասարան: Սարիբեկ Հակոբյան: 2017թ.:
  
16. Է. Ղազարյան, Ա. Կիրակոսյան, Գ. Մելիքյան և այլք, Ավագ դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար. Երևան 2010թ.:
17. Է. Ղազարյան, Ա. Կիրակոսյան, Գ. Մելիքյան և այլք, Ավագ դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար. Երևան 2010թ.:

18. Է. Ղազարյան, Ա. Կիրակոսյան, Գ. Մելիքյան և այլք, Ավագ դպրոցի 12-րդ դասարանի դասագիրք ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար. Երևան 2011թ.:

19. Թորոս Թորամանյան, «Հայկական ճարտարապետություն» (հատոր 1)

20. Թորոս Թորամանյան, «Հայկական ճարտարապետություն» (հատոր 2)

21. Թորոս Թորամանյան, «Զվարթնոց, Գազկաշեն»

22. Վարազդատ Հարությունյան, «Հայկական ճարտարապետության պատմություն»

23. Վիկտոր Հյուգո, «Փարիզի Աստվածամոր տաճարը»

24. Թ.Խ. Հակոբյան, «Անիի պատմություն»

25. Գեղարվեստական գրականության այլ գործեր, որտեղ առկա են ճարտարապետական տեքստեր